# ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

*ՄՈՒՐԱԴ ՀԱՄՐԱԹՅԱՆ*
*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,*
*ճարտարապետության դոկտոր,*
*ՀԳՊԱ պրոֆեսոր*

Ուշ միջնադարը խիստ անբարենպաստ էր հայ մշակույթի բնականոն զարգացման համար՝ Հայաստանը վերածվել էր Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի միջև մղվող պատերազմների թատերաբեմի:

Հայաստանում 15-16-րդ դդ. մշակույթի անկումը զուգակցվեց ուսումնական-կրթական գործի ճգնաժամի հետ: 15-րդ դ. առաջին քառորդում դադարեց գործել Տաթևի համալսարանը: Հաջորդ խոշոր կրթական կենտրոնը՝ Մեծոփա վանքի դպրոցը, գոյատևեց մինչև 15-րդ դ. կեսը: Երզնկայի Սեպուհ լեռան Ավագ և Կապոսի վանքերին առընթեր ուսումնական հաստատությունները վերացան 15-րդ դ. վերջերին: 16-րդ դարն ամբողջությամբ գիտական և ուսումնական գործի ամլության ժամանակաշրջան էր՝ գործում էր միայն Բաղեշի Խնդրակատար վանքի դպրոցը, որը հանգեց միայն 17-րդ դ. սկզբին, երբ Սյունյաց Մեծ կամ Հարանց անապատի ստեղծումով սկիզբ դրվեց Հայաստանում գիտամշակութային կյանքի վերածննդին: Նրա հիմնադիր Մովսես Տաթևացին իր աշակերտների հետ միասին դպրոցներ բացեց նաև Աստապատում, Շոռոթում, Ագուլիսում, այնուհետև Երևանի Ս.Անանիա առաքյալի անապատում և Հովհաննավանքում: Իսկ Ներսես Մոկացին 1622 թ. Մեծ անապատից տեղափոխվեց Վասպուրական և Լիմում նոր դպրոց հիմնեց: 17-րդ դարում խոշոր և բարգավաճ ուսումնական կենտրոն էր Բաղեշի Ամիրդոլու վանքի դպրոցը, որի կարևոր ավանդը հայ մշակույթում վանքի և շրջակա գավառների ձեռագրերի նորոգումն ու պահպանումը, հայ պատմիչների գործերի ընդօրինակումն էր, որոնցից մի քանիսը մեզ են հասել Բաղեշի դպրոցի շնորհիվ[1]:

17-18-րդ դդ. աշխուժանում է ուսումնական կյանքը նաև հայ գաղթօջախներում[2]:

---

1 Այս դպրոցի մասին տես՝ Ա. Հակոբյան, Բաղեշի Ամիրդոլու համալսարանը և կերպարվեստը այդ կրթարանում. 17-րդ դար, Երևան, Զանգակ, 2012:

2 Տես՝ Հայ ժողովրդի պատմություն: Հատոր 4, Հայ ժողովուրդը ֆեոդալիզմի վայրէջքի ժամանակաշրջանում, XIV-XVIII դդ: Երևան, 1972, էջ 437-449:

17-րդ դարի 30-ական թթ. Սյունյաց Մեծ անապատի սան Խաչատուր Կեչառեցին դպրոց է հիմնում Նոր Ջուղայում. «…յօրինեաց զհամալսարանս՝ յորում ուսուցանէր և մարզէր ցհամբակագոյնս ի գիտութիւնս հնոց և նորոց կտակարանաց, և զհամայն արհեստս ազատական, և զգերբնազանցականս»[1]: Դպրոցը գործում էր հայ վաճառականության միջոցներով և այդ պատճառով ուներ միանգամայն ուրույն բնույթ՝ առևտրական ասպարեզին պիտանի աշակերտներ պատրաստել: Խաչատուր Կեչառեցու հանձնարարությամբ Հովհաննես վարդապետը յոթ տարի Իտալիայում տպագրական գործ է սովորում, Նոր Ջուղա բերդում հիմնում «զգործարան տպագրութեան» և 1647 թ. հրատարակում առաջին գիրքը[2]:

18-րդ դ. սկզբին դպրոցներ հիմնվեցին հայաշատ Կ.Պոլսում և Վենետիկի Ս.Ղազար կղզում ապաստանած Մխիթարյան միաբանության ներքո: Մխիթարյան դպրոցը, սկզբնապես ունենալով ավանդական ուսումնական ծրագիր, հետագայում եվրոպական կրթական համակարգի ազդեցությամբ վերակառուցվում է, ստանում նոր, արդիական ծրագիր, դառնում նաև գիտական կենտրոն:

Բուն Հայաստանում խոշոր կրթական հաստատություն դարձավ Էջմիածնի դպրոցը, որը վերահաստատվեց 17-րդ դ. առաջին քառորդում և հզորացավ 1635-1637 թթ., երբ Փիլիպոս կաթողիկոսը այստեղ տեղափոխեց Հովհաննավանքի դպրոցը: Էջմիածնում դասավանդում էին այնպիսի հայտնի դեմքեր, ինչպիսիք էին Ոսկան Երևանցին, Սիմեոն Ջուղայեցին, Ստեփանոս Լեհացին, որոնց շնորհիվ ուսումնասիրվում էին ճշգրիտ գիտությունները: Էջմիածնի դպրոցը անբարենպաստ քաղաքական և տնտեսական պայմանների պատճառով 18-րդ դ. անկում է ապրում և վերստին ծաղկում միայն 1763 թ.-ից հետո, կաթողիկոս Սիմեոն Երևանցու ջանքերով:

Ուշ միջնադարի հայկական վանքերին կից գործող դպրոցների ուսումնական ծրագրերը նոր ժամանակի թելադրանքով նույնպես ստանում էին արդիական բնույթ. ավանդական առարկաների՝ աստվածաբանության, հռետորության, փիլիսոփայության, քերականության, տրամաբանության հետ մեկտեղ դասավանդվում էին ճշգրիտ, աշխարհիկ՝ «արտաքին գիտություններ» ևս:

Խոսելով Հովհաննավանքի դպրոցի մասին, նրա սան և ապա ուսուցիչ, պատմագիր Զաքարիա Քանաքեռցին նշում է, որ այստեղ

1 Խաչատուր Ջուղայեցւոյ Պատմութիւն պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 116:

2 Նույն տեղում, էջ 118:

դասավանդում էին «արտաքին» գիտություններ, երաժշտություն, հավաքվում ձեռագրեր, գրքեր գրվում: Զաքարիա եպիսկոպոսը Հովհաննավանքում «... ժողովեաց զբազում գրեանս, և ստացաւ բազում աշակերտս, որ և են տրուպ Զաքէոս ընդ նոսա: Հաստատեաց և Դպրատունս, և զնուաստութիւն իմ կարգեաց ուսուցիչ մանկանց: Եվ եբեր Զուղայեցի Սիմէոն վարդապետն, որ ուսոյց մեզ արհեստ արտաքնոց: Եւ Իլովացի Նիկողայոս վարդապետն բերեալ, որ ուսոյց զերաժշտությունն»[1]: Ինչպես տեսնում ենք, Հովհաննավանքի դպրոցը երկաստիճան է եղել՝ տարրական, որտեղ դասավանդել է պատմիչը, և բարձրագույն, որտեղ ինքը միաժամանակ ուսանել է:

Հայաստանի 18-րդ դ. կրոնական կենտրոններում գործող դպրոցների համար հատուկ շինություններ չեն կառուցվել: Հիմնականում այդպես է եղել նաև միջնադարում. առանձին կառուցվել են միայն մատենադարանների շենքերը (Սանահին, Հաղպատ, Սաղմոսավանք, Հովհաննավանք, Գոշավանք): Սանահինի այսպես կոչված «Մագիստրոսի ճեմարանը» (XI դ.), որ թաղածածկ երկար սրահ է վանքի Ս.Աստվածածին և Ամենափրկիչ եկեղեցիների միջև, ըստ ավանդության լսարան է ծառայել (նկ. 1): Դատելով աղբյուրներում պահպանված տեղեկություններից՝ ենթադրելի է, որ Հայաստանի 10-13-րդ դդ. վանքերում գործող բազմաթիվ դպրոցների համար որպես լսարան օգտագործվել են գավիթներն ու ժամատները: Այսպես, ըստ պատմիչ Կիրակոս Գանձակեցու՝ Վանական վարդապետը Խորանաշատ վանքում 13-րդ դ. հիմնել է դպրոց՝ աշակերտներին ըստ ամենայնի դասավանդելով իր իսկ շինած գավթում. «Ի վանսն… որ կոչի Խորանաշատ… գաւիթ շինելով ի կոփածոյ վիմաց… զբան վարդապետութեանն ուսուցանէր այնոցիկ, որ ժողովէին առ նա յամենայն գաւառաց»[2]:

12-13-րդ դդ. գավիթների տարածված տիպը քառամույթն էր. այդպիսին է նաև Խորանաշատի գավիթը: Տվյալ դեպքում, ըստ երևույթին, դասավանդումը կատարվել է կառուցվածքի հարավային հատվածում, որը լուսավորվում է այդ կողմից բացվող պատուհանով: Սյուներից մինչև պատն ընկած տարածությունն ունի մոտ 30-40 քմ մակերես, որը միանգամայն բավարար է 3-4 տասնյակ ունկնդիր տեղավորելու համար:

1 Զաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն, Հ. երրորդ, Վաղարշապատ, 1870, էջ 35:

2 Կիրակոս Գանձակեցւոյ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1910, էջ 333:

17-րդ դ. բացված դպրոցների մեծ մասը գործում էր «անապատներում»: Այս շրջանում Արևելյան Հայաստանում կառուցված թե՛ վանքերը և թե՛ անապատները գավիթներ և ժամատներ չունեին, դրանց փոխարեն եղել են կիսաբաց սրահներ, որոնք հարմար չէին որպես լսարան օգտագործելու համար: Հայտնի է, սակայն, որ «անապատներում», առաջին հերթին՝ Սյունյաց Մեծ անապատում, որը սկիզբ տվեց և օրինակ ծառայեց 17-րդ դ. Հայաստանի մյուս անապատների համար, ուսման նպատակով օգտագործվում էին սեղանատները: Ինչպես նշում է Առաքել Դավրիժեցին, այնտեղ էր տեղի ունենում համատեղ ընթերցանությունը[1]: Ուշ միջնադարի սեղանատներն իրենց հորինվածքով համապատասխանում էին ուսումնական շենքերին ներկայացվող պահանջներին՝ ուղղանկյուն, ձգված, առանց միջանկյալ հենարանների տարածություն, բավարար լուսավորված և օժտված սեղաններով ու նստարաններով:

18-րդ դ. սկզբին Հայաստանում, ինչպես վանքերում, այնպես էլ խոշոր բնակավայրերում սկսեցին կառուցել դպրոցների համար հատուկ շենքեր: Սիմեոն Երևանցին «շինեաց զմոմատունս և զդպրատունս ձմերան»[2]: Այն, որ հատուկ նշվում է դպրոցի շենքի ձմեռային բնույթը, նշանակում է, որ եղել են նաև ամառային շինություններ, որոնք միանգամայն նպատակահարմար էին շոգ կլիմա ունեցող Արարատյան հարթավայրում: Էջմիածնի 18-րդ դ. դպրոցական շենքը չի պահպանվել: Այժմ կանգուն է Եփրեմ կաթողիկոսի 19-րդ դ. առաջին կեսի կառուցած երկհարկանի շենքը՝ միջանցքի երկու կողմում դասավորված սենյակներով, կենտրոնում՝ գմբեթածածկ կլոր լսարանով: 18-րդ դ. Հայաստանի վանքերին կից դպրոցների շենքերի ճարտարապետության մասին որոշ պատկերացում է տալիս Տաթևի վանքի դպրոցը, որը բացվեց 1980-ական թթ. պեղումների շնորհիվ (այն կանգուն է եղել և գործել է մինչև 20-րդ դ. սկիզբը):

Տաթևի դպրոցը կառուցել է վանքի առաջնորդ Աբրահամ Աստապատեցին (մահացել է 1777 թ.):

Դպրոցի շենքը տեղադրված է վանքի արևելյան պարսպին համարյա ուղղահայաց՝ դարպասի մոտից ձգվելով դեպի արևելք: Ուղղագիծ, բավական երկար (74.5 մ) և բարձր պատին, որը հասնում է մինչև ձորի եզրը, հարավից կից են եղել դպրոցի 16 դասասենյակները:

1 Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Երևան, 1990, էջ 281:

2 Սիմէոն կաթողիկոս, Ջամբռ, Էջմիածին, 1873, էջ 34:

Դրանք ուղղանկյուն են, թաղածածկ, միմյանց կից և դուռ են ունեցել դասարանների առջևով, դպրոցի ողջ երկարությամբ ձգվող փայտե պատշգամբի (ըստ տարեց գյուղացիների հիշողության)։ Սենյակները տաքացվել են բուխարիներով, որոնք գտնվում են հյուսիսային պատ-պարսպի մեջ։ Դասասենյակների ստորին, կիսանկուղային հարկի սենյակները եղել են թաղածածկ, հաղորդակցվել են միմյանց հետ և դրսից ունեցել են առանձին մուտքեր։

Տաթևի դպրոցն արժեքավոր է որպես ուշ միջնադարի Հայաստանի ուսումնական շենքի միակ օրինակ (թեկուզ այժմ ավերված), որը պատկերացում է տալիս 18-րդ դ. վանական դպրոցների ճարտա-րապետության մասին։ Նրա հորինվածքը փաստորեն նախանշեց անցումը ուսումնական գործի կազմակերպման միջնադարյան ձևերից (այլ շենքերի հարմարեցում, ընդհանուր միասնական տարածության մեջ դասավանդում) դեպի ժամանակակից դրվածք (հատուկ շենք, առանձին բազմաթիվ դասասենյակներով)։


## SUMMARY

### The architecture of educational buildings in armenia in the late middle ages



*Mourad Hasratian*
*Corr. Member of NASA*
*Doctor of Architecture, Professor*



Before the 18th century the separated buildings were not built for schools functioning under religious centers of Armenia (for the most part vestibules were used for educational aim). As to the famous school of Grigor Magistros in Sanahin belongs to the 11th century, it consisted of a vaulted auditorium that was built between two churches of the monastery. The first known model of a school building – the "Winter School" (has not survived) – was reconstructed in the 18th century in Etchmiadzin by the Catholicos Simeon Yerevantsi. The two-storeyed building constructed in Tatev in 1770's gives a notion of the architecture of schools functioning under the monasteries of the late Middle Ages. The building consists of 16 adjoining vaulted classrooms, the entrance to which was opened from a wooden balcony that was extended along the whole building. This composition, in fact, predetermined the transition from the medieval forms of education arrangement in Armenia to its contemporary state.



**Key words.** *Religious Centres, Narex, Grigor Magister, Sanahin, Vaulted Auditorium, monastry Simeon Yerevantsy.*

**Резюме**

**Архитектура учебных зданий армении позднего средневековья**

*Мурад Асратян*
*член-корреспондент НАН РА*
*Доктор архитектуры*
*Профессор ГАХА*

До XVIIIв. отдельных зданий для действующих при религиозных центрах Армении школ, не сооружалось (для учебной цели использовались в основном притворы). Знаменитая же школа Григора Магистроса XI в. в Санаине состояла из сводчатой аудитопии, встроенной между двумя церквами монастыря. Первым известным образцом здания школы является так называемая «Зимняя школа» (не сохранилась), перестроенная в Эчмиадзине католикосом Симеоном Ереванци в начале XVIII в.. Об архитектуре монастырских школ позднего средневековья дает представление двухэтажное здание, построенное в 1770-х годах в Татеве и состоящее из 16 смежных сводчатых комнат-классов, вход в которые открывался с деревянного балкона, тянувшегося вдоль всего здания. Эта композиция фактически предопределила в Армении переход от средневековых форм построения учебного заведения к его современному типу.

**Ключевые слова.** *Религиозные центры, притворы, Григор Магистрос, Санаин, сводчатая аудитория, монастырь, «Зимняя школа», Симеон Ереванци.*

1. Մագիստրոսի ճեմարանը (11-րդ դար) Սանահինի վանքում